



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«25» 06 2018թ.

No 06/3-1/35391-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 05.05.2018թ.

թիվ Պ-31 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը՝ իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 67-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հարկային հաշիվներ դուրս չեն գրում օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հատուկ հարկային համակարգերի շրջանակներում կատարվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների մասով,

- 425-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հարկային հաշիվների դուրս գրման սահմանափակումների խախտմամբ հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկ վճարողները պարտավոր են հարկային

հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը օրենսգրքով սահմանված կարգով վճարել պետական բյուջե, եթե դուրս գրված հարկային հաշիվը սահմանված կարգով չեղյալ չի համարվել,

- 256-րդ և 257-րդ հոդվածներին համապատասխան՝ շրջանառության հարկով հարկման օբյեկտ են համարվում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, իսկ շրջանառության հարկով հարկման բազա է համարվում շրջանառության հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների իրացման շրջանառությունը,

- 4-րդ հոդվածի 1-ին մասի 50-րդ կետի համաձայն՝ իրացման շրջանառությունը ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացման ենթակա ձեռնարկատիրական եկամուտ՝ դրամական արտահայտությամբ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավական կարգավորումները՝ հայտնում ենք, որ շրջանառության հարկ վճարող կազմակերպության կողմից ապրանքների մատակարարման մասով դուրս գրված հարկային հաշիվը սահմանված կարգով չեղյալ չհամարելու դեպքում, այդ կազմակերպությունը պարտավոր է հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը օրենսգրքով սահմանված կարգով վճարել պետական բյուջե, միաժամանակ՝ այդ ապրանքների մատակարարումից ստացվող եկամուտները՝ առանց ԱԱՀ-ի, ներառվում են շրջանառության հարկով հարկման բազայի մեջ:

Հարգանքով՝

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 6/25/2018 21:07:53 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ ՎԱՇՍՎ հարկերի և պարտադիր վճարների
մեթոդաբանության բաժին, հեռ. 060-544-646